ԱՍՏՂ-ԱՐԵՎԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում՝ 12 դրամ. վեցամսեայ 6 դ.
Պարսկաստանի օտար քաղաքները 15 դ. վեցամսեայ 8 դ.
Ռուսաստան 3 բուբլի. վեցամսեայ 2 բուբլի.
Օտար երկրները 8 ֆրանք. վեցամսեայ 5 ֆրանք:
Հասցէ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

Թիւ 1
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՅՈՒՆՎԱՐ
1896
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի Եկեղեցի եւ տօն օրերն:
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուվ. իւրաքանչիւր բառն 1 շահի:

„ՄԵՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ“

Ինչպէս որ միւնչեւ հիմայ Պարսկահայն ոչ մի առիթ չէ փախցրել յայտնելու հրապարակաւ իւր երախտագիտութեան արտաքուղխ մաղթանքը առ իրան խնամող եւ պահպանող բարեխնամ եւ լուսամիտ կառավարութիւնը, նոյնպէս եւ այսօր. Նոր տարու առթով եւ Աստղ-Արեւելեանի հրատարակութեամբ յայտնում է մեր բերանով իւր անհուն շնորհակալութեան այն բոլոր վառ զգացումներն՝ որոնք լցնում են իւր սիրտը եւ մեր ձեռքով Նորին Կայսերական Վեհափառութեան Արեգակնափայլ Շահի գահի առաջ դնում իւր խստեհ հպատակութեան ամենաջերմ հաւատիքն. խնդրելով երկար եւ գերերջանիկ տարիներ իւր սիրելի եւ լուսամիտ Վեհապետին, յաջողութիւն եւ ի բարւոք զարգացումն Պարսկահայ գաղթականութեան:

Արդարեւ որքան երջանիկ պէտք է լինի այն ժողովուրդը, որ գիտէ թէ իրան պաշտպանող եւ արգահատող մի տէր ունի իւր գլխի վերեւն: Թափառականի նման ասա եւ անդ դնգերել, մերկ քաղցած եւ ծարաւ, չունենալ վստահելի մի կտոր քար իւր գլուխը հանգստացնելու համար, չունենալ տուն, տեղ եւ ընտանիք, անօգ եւ անօգնական, ներկայից զզուած եւ ապագայից անյոյս. մարդկային կերպարանքով ծնծուած, հալածուած եւ չարչարուած մի կենդանի լինել եւ դռնից դուռն, փողոցից փողոց, երկրից երկիր՝ քաշքշուել, օհ, սոսկալի, սոսկալի վիճակ.....

Բայց մենք, Պարսկահայերս, փառք Աստուծոյ ծանօթ չենք այդ մի շարքսոսկումներին: Շնորհիւ մեր Օգոստափառ Կայսեր եւ Նորա լուսամիտ կառավարութեան հանգիստ ենք ապրում. վայելում ենք-քաղաքական կատարեալ ազատութիւններ եւ ներկայից գոհ եւ ապագայի վրայ լիայոյս, չունինք ուրիշ հոգ, քան մեր կարեաց համեմատ յառաջանալ դէպի դարիս աստղի փողփողուն, դէպի լոյս:

Այս-անքիւ բարեաց փոխարէն անհուն շնորհակալութիւն առ մեր գորովագութ Վեհապետն եւ երախտագիտական բուռն զգացումներիր ամենաջերմ հաւատին առ նորա հայրախնամ կառավարութիւնն:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տարեգլխի առթիւ թերթիս առաջին թիւն իւր որոշուած ժամանակից մի քանի օր առաջ ենք հրատարակում, որպէս զի բաղդ ունենանք Աստղիս ծագման հետ միասին շնորհաւորել ամբողջ Հայութեան Նոր-Տարին, որ յուսով ենք երջանկութեան, մտաւոր զարգացման և փառաց նոր մի ասպարէզ պիտի բանայ նրա համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր շնորհակալութիւնը. Աստղ-Արեւելեանի ուղղութիւնը. Ով է ճշմարիտը. Դժուարութիւններ. Առ Աստղն-Արեւելեան. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ խմբագրութեան. — Նամակ Թէհրանից. Նամակ Ն. Ջուղայից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռագիրներ. Աստղ-Արեւելեանի պատասխաններ.

ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս որ Աստղ-Արեւելեան ընկերութիւնը թերթիս համար հանած յայտարարութեան մէջ ասել էր՝ նա ձեռնարկում է Աստղ-Արեւելեանի հրատարակութեան՝ լուրջ, անհատական հաշիւներից դուրս և բոլոր սրտով ազգի շահերին նուիրուած մի թերթ ունենալու համար Պարսկահայ գաղթականութեան մէջ։

Թերթիս առաջին պայմանն է լրջութիւնն, ինչպէս ասացի, քանի որ անժխտելի մի փաստ է դարձել այսօր թէ լրագիրն է որ գլխաւորապէս նպաստում է հասարակային յառաջդիմութեան և լուսաւորութեան. լրագիրն գաղափարում է մարդուս սիրտը, ընդլայնում է ու մշակում մարդուս միտքն ու զգացումներն, փոխում է և ուղղում հասարակային սխալ կարծիքներն, վարքն ու բարքն. նա խօսում է ամենի հետ, յայտնում իւր գաղափարներն ազատօրէն և ներկիւղ. գովում է բարին ու օգտակարն և հարուածում չարն ու վնասակարն. լրագիրն ճիշտ նմանում է մի դասախարակի, այն տարբերութեամբ միայն որ վերջինս խօսում է սահմանափակ մի շրջանի և փոքրաթիւ ունկնդիրների առջև իսկ առաջինն աշխարհիս ամեն ծայրում և ամբողջ մարդկութեան հետ։ Այս պաշտօնը հաւատարմութեամբ և անթերի կատարելու առաջին պայմանն է լրջութիւնն։

Անհատական հաշիւներից դուրս է այս թերթն, ասացինք վերն, և կրկնում ենք։ Իւր սրբազան կոչման չի ծառայեր այն թերթն, որ մասնաւորաց նեխած կրքերի շարաւներովն է սնանում և սիրում է իւր էջերն բաց անել Մարկոս և Թորոս ազգերի միմեանց հետ ունեցած հին խնամական վէճերին, որոնք ազգային անուանի տակ վարագուրուած՝ յարգի չափ օգուտ չունին Ազգին։

Իւր սրբազան կոչման չի ծառայեր այն թերթն, որ հակառակասիրութեան ոգւով տոգորուած՝ ամեն ժամ պատրաստ է հնդկական դամելիոններին նման փոխել իւր գոյնը, նկատելով թէ իւր բարեկամական յարաբերութիւններն էլ փոխւում են մարդոց հետ։ Ոչ, թերթն մի ուղղութիւն պարտաւոր է ունենալ, յարմար իւր վեհ կոչման, և ամեն բան զոհել իւր ուղղութիւնը պաշտպանելու և նրան հետևելու համար։

Աստղ-Արևելեան ընկերութիւնը լուրջ և խոհեմ մի տնօրինութեամբ իւր թերթի ուղղութիւնը և ծրագիրը նախօրօք գծեց և կազմեց խմբագրական մի ժողով զայն գործադրելու համար։ Խմբագրական ժողովի հաւանութիւնն չստացած և ոչ մի յօդուած կարող է թերթի մէջ մտնել և քանի որ ընկերութեան կանոնագրի երկրորդ յօդուածն իսկ արգիլում է պաշտօնապէս անհատական խնդրոց մուտքը լրագրում՝ խմբագրութիւնն էլ պարտաւոր է մերժել բացէ ի բաց այդ տեսակ յօդուածներն։

Խմբագրութիւնը ամեն մի խնդրում միջին մի ընթացք պիտի բռնէ. ամեն մի խնդիր, ամեն մի յօդուած խմբագրական ժողովի սառն և անկողմնակալ քննութեան բովից պիտի անցնի և ապա հրապարակ պիտի ելնէ։

Թերթի ընդհանուր ուղղութեան վերայ առ այժմ այսքանս բաւական համարելով՝ անցնում ենք նրա ծրագրին։

1. Աստղ-Արևելեանի մէջ առաջին տեղը՝ պիտի բռնեն առաջնորդող յօդուածներն, որոնց մէջ պիտի ձգտենք շօշափել հասարակութեան կենսական առօրեայ խնդիրներն և ամենայն դէպքում ինչ որ նրան շահաւէտ է պաշտպանել և քննադատել կամ ինչ որ սխալ է և նրան վնասաբեր ուղղել։

2. Ներքին տեսութեան մէջ պիտի մտնեն թղթակցութիւններ Պարսկահայ գաղթականութեան վերաբերեալ և Ներքին լուրեր։

Մեր յառաջաբանից կարծեմ բաւական յայտնուեցաւ թէ ինչ է մեր ուղղութիւնն. հետևաբար մեր յարգելի թղթակիցներից կրկին պիտի խնդրենք որ որքան կարելի է աշխատին արծի նման վերերն սաւառնել և որդերին թողնեն տղմի մէջ սողալու պաշտօնը. իւրեանց թղթակցութիւնք թող աւելի ընդհանուր լինին և ընդհանրութեան շահերը շօշափեն քան մասնաւորաց գծուծ հաշիւները։

3. Արտաքին տեսութեան մէջ պիտի մտնեն արտասահմանի թղթակցութիւններն և արտաքին լուրերն։ Արտասահմանի թղթակցութիւնների համար պէտք չենք զգում կրկնել այնտ ինչ որ արդէն ասացինք ներքին թղթակցութեանց համար։

Թղթակցութիւնն մի և նոյն է. արտաքին լինի նա թէ ներքին՝ քանի որ երկուսն էլ գալիս հանգում են ազգութեան՝ ընդհանուր շահերին։

4. Քաղաքական բաժին, որի մէջ պիտի մտնեն ներքին քաղաքական լուրեր, որքան կներեն մեզ կառավարութիւնից մեզ դրուած իրաւունքներն՝ և արտաքին քաղաքականութեան վերայ ընդհանուր մի տեսութիւն։

Այս տեղ պարտք ենք համարում յայտնել թէ մեր Արեղակնափայլ Շահի բարեխնամ կառավարութիւնն դրացիական պարտաւորութեանց հաւատարիմ ուզելով մնալ՝ արգիլել է մեզ գրել Հայկական հարցի և Օսմանեան կառավարութեան վերայ, և նկատելով թէ Ընկերութեան Ջաւա-Հայ տպարանի տնօրինութիւնն ամենօրեայ հեռագրական լրերն արդէն հրատարակում է մասնաւոր «Հեռագրալրերով»՝ այդ պատճառաւ խմբագրութիւնս պիտի բաւականանայ միայն արտաքին քաղաքականութեան վերայ ընդհանուր մի տեսութիւն անելով իւր թերթի մէջ։

5. Բանասիրական, որի մէջ պիտի մտնեն բանաստեղծական բոլոր այն գրուածներն, որք ընթերցող հասարակութեան միտքն ու սիրտը մշակելու, ճաշակը հղկելու և զգացմունքը ազնուացնելու են ծառայում։ Այս բաժնի մէջ պիտի մտնեն նաև համեստ և սրտայոյզ պատկերներով ընթերցողների սէրն, համակրանքն ու հետաքրքրութիւնը դէպ ի թերթը գրաւող վէպեր և հայութեան կեանքից առնուած կամ օտարազգի մատենագիրներից թարգմանուած պատմութիւններ.

6. Վեցերորդ բաժնի մէջ են մտնում բոլոր այն առողջապահական կամ ընտանեկան բժշկութեան վերաբերեալ յօդուածներն որոնք դիւրամատչելի կանոններ և ձևեր են սովորեցնում ընտանեաց ծնողներին իւրեանց երեխաների առողջութիւնը պահպանելու և հիւանդութիւնը բժշկելու համար։

Ահա թերթի ընդհանուր ծրագիրն։ Վերջացնելով մեր յօդուածը լիայոյս ենք թէ Պարսկահայն մասնաւորապէս և մեր արտասահմանի եղբայրակիցներն ընդհանրապէս պիտի քաջալերեն մեզ այս ձեռնարկի մէջ, որն ազգօգուտ դարձնելու և իւր սրբազան կոչման հաւատարիմ պահելու համար՝ խմբագրական ժողովը չպիտի խնայէ իւր ջանքը և իւր նպատակի միակ կէտը պիտի ընտրէ յաջողութիւն տալ իւր թերթին, պաշտպանելու հասարակական ընդհանուր շահերն յ՛օգուտ և ի յառաջադիմութիւն Հայ սերնդի։

Ա. Մարգարեան

ՈՎ Է ՃՇՄԱՐԻՏԸ

Ցունն այն ժամանակ է քանդւում.
Երբ զողը ներկայ է լինում։
Ժողով. Առած.

Հէնց որ մեր երիտասարդները սկսում են շատից քիչից սև ու սպիտակը ճանաչել, նրանք լինում են անհաւատ, նրանք սկսում են ծաղրել եկեղեցին, եպիսկոպոսները, վարդապետները և քահանաները, Նրանց համար այլ ևս խոտելի են դառնում աւանդական ծէսերը, սովորութիւնները. մի խօսքով որքան տարածւում է կրթական գործի ծաւալը, այնքան նրա առաջից խոյս է տալիս աստուածապաշտութիւնը։ Խօսքեր, որ մենք վարժուած ենք լսելու իւրաքանչիւր քայլափոխում մեր հայրերից. խօսքեր, որ մի գրօշ էլ արժէք չունին. արժէք չունին. որովհետև հաստատուած չեն ճշմարիտ հիմքերի վրայ։

Եթէ մենք մի օր դառնանք և հարցնենք. յարգելի հայրեր, ինչ է նշանակում ճշմարիտ աստուածապաշտութիւն. ինչ է նշանակում ճշմարիտ քրիստոնէութիւն. որոնք են Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան գէթ ամենատարրական մասերը, ինչ պիտի պատասխանեն։ Ի հարկէ մեզ պիտի պատասխանեն- ծոմ պահել, պահս պահել, եկեղեցի գնալ, իւր ծնգներով եկեղեցու գորգերը մաշել, ոսկեղէն և արծաթեղէն անօթները համբուրել և որ աւելի նուիրականն է, աչք գոցել այն ամեն զեղծումների դէմ, որ գործում է մի սուրբ մարդ-եպիսկոպոս, վարդապետ և կամ քահանայ։ Բայց չէ՞ որ «հեթանոսներն էլ են այսպէս անում»։

Ո՛չ, սիրելի՛ հայրեր, ո՛չ, այդ չէ ճշմարիտ քրիստոնէութիւնը. ճշմարիտ քրիստոնէութիւնը ծիսակատարութեան և ձևակերպութեան մէջ չը պէտք է որոնել. իսկ աչք գոցել զեղծումների դէմ՝ նշանակում է դաւաճանել այն Աստուածեղէն Լոկի ոգուն, որ Գողգոթայից աղաղակեցով եկեղեցի, առ այս իմ վերջին մի բուռ արիւնը, մեայն երանի թէ կարողանայ սա զերծ պահել յեզ եղծումներից։

Հայաստանեայց եկեղեցին սուրբ է, իւր խնկելի զաւակայ և մարտիրոսաց արիւնով նուիրագործուած, կրում է իւր ճակատին առաքելական պարզ և անխարդախ գրշմը, հիանալի է իւր ինքնուրոյն կեանքով. այս ամենը մենք շատ լաւ ենք ըմբռնում, չենք ըմբռնում միայն, թէ ինչպէս սրբանալու իրաւունք են ստանում այն պատահական Թաթոսները, Մնացս կանները և Համբառչները, որ մի որոշ գումարի զօրութեամբ միայն, այսօր այդ եկեղեցու վեհ պաշտօնին արժանանալու իրաւունք են ձեռք բերել։ Եէ՞ որ դրանք էլ մահկանացուներ են, այն էլ շատ հասարակ տեսակից... ուրեմն ինչու սրբապղծութիւն համարել նրանց անձնաւորութեան թոյլ և զօրեղ կողմերը բարեխիղճ կրիտիկայի ենթարկելը. ինչու շփոթել ծառայի և տիրոջ իրաւունքները միմեանց հետ։

Սիրելի՛ հայրեր, մեր սիրտը կարատւում է, երբ մտածում ենք, որ այդ ձեր սիրած և փայփայած եկեղեցու սիւները, անգիտակցաբար դուք ձեր սեփհական ձեռքով էք խորտակում և պատճառ դառնում, որ մի օր ապագայ սերունդը, նրա փլատակների վրայ նստած՝ արտասուք թափէ. չէ՞ որ դուք ձեր անտարբերութեամբ քաջալերում էք ապիկար պաշտօնեաներին, որ երես առած երեխայի պէս շահատակեն այդ սուրբ անդաստանը։ Անուրանալի է, որ դուք ուսումը, մտաւոր զարգացումը, լոյսը սիրում էք և յարգում. բայց, ասացէք, ի սէր Աստուծոյ, ձեր ականջներն ինչու՞ էք խցում նրանց արդար պահանջների. աղաղակների առաջ. ինչու՞ են հրէշաւոր թւում ձեզ նրանց թելադրած ճշմարտութիւնները։

Ի՞նչ, դուք ապա մեր թշուառութիւնը մեզ ակներև դարձնելու համար էր միայն, որ ամեն ճիգ և ջանք թափեցիք, որպէս զի մեր հոգւոյ աչքերը բացուին և այսօր երբ բացուած են և մենք նշմարում ենք մեզ շրջապատող առարկաները իրենց պարզ և բնական գոյներով, դուք թանձր վարագոյրներով կամենում էք վարագուրել մեր հոգւոյ հորիզոնը։ Ճրագը վառելուց յետոյ, ցանկանում էք թագցնել ծածկոցի տակ։ Ո՛չ, ո՛չ, հեռու կացէք այդ մտքերից, պահանջեցէք մեզնից մեր արիւնը, հեշտութեամբ կարող ենք զրկուել նրանից. իսկ դաւաճանել լոյսին, մեղանչել ճշմարիտ կրիտիկայի օրէնքներին, ցաւում ենք որ այդ դէպքում ձեզ պիտի ներկայանանք իբր ըմբոստ զաւակներ և եղբայրներ։ Հեշտութեամբ կը բաժանուինք այն ամեն բարիքից, որ մերը չէ, վարձու է. իսկ հրաժարուիլ միս ու ոսկր դարձած սեփհականութիւնից երբէք, երբէք։

Բաբին, լաւը և գեղեցիկը պաշտպանելու համար եթէ պէտք լինի կրտրատել մացառների և փշերի ամբողջ անտառներ, չէ՞ք վարանիլ. այդ տեղ

կացինը, մկրատը և սղոցը կը գործեն մեր ձեռքում խիստ անողորմ, խիստ անգութ և այդպէս էլ պիտի յառաջանան մեր քայլերը, դէպի մեր կեանքի արմատական վերանորոգութիւնը։

Մեզանից պահանջում էք, որ մենք լռենք, բայց ինչպէս լռենք. հաւատալու բան է, որ Հայաստանեայց եկեղեցու պաշտօնեան, 80 տարեկան հասակում, 40 տարի քահանայագործութիւն անելուց յետոյ, նիւթականապէս՝ գտնուի այնպիսի քայքայուած վիճակի մէջ, որ ստիպուի իւր թշուառ գոյութիւնը քարշ տալու համար հարիւրաւոր մղոն ճանապարհ կտրելով մինչև Թէհրան գայ և մուրացկանութիւն անէ...։ Բայց երեկուայ տէր Յովհաննէսի թողած թարմ տպաւորութիւնը ստիպեց մեզ հաւատալ տխուր իրողութեան։ Այստեղ ով է մեղաւորը. ժողովուրդը, ո՞չ ոչ, ես ձեզ անիրաւ կասեմ եթէ մեղադրեմ համարէք ժողովրդին։ Հայ ժողովուրդը, մանաւանդ հայ գիւղացին՝ իւր զուտակի հացը ձեռքիցն առնում, իւր եկեղեցու պաշտօնեային է տալիս. այս տեղ մեղաւորն իւր պետն է, որ նրան իւր ձեռքով քայքայեց։ Այստեղ ուշխարը բղխում է ոչ թէ անգութ գայլերից՝ այլ իւր սիրելի հովուից։

Պարզենք։ Ամմադարադ հայաբնակ գիւղը, որ գտնուում է Հարմհալ գաւառում՝ ունի միայն 40 տուն հայ բնակիչ։ Բնակիչները հողագործ են և մեծաւ մասամբ աղքատ. այդ գիւղը մինչև մի քանի տարի առաջ՝ ունէր երկու քահանայ։ Ի հարկէ 40 չքաւոր տան համար երկու քահանան էլ ինքն ըստ ինքեան մի մեծ բեռ է. բայց ինչ կասես, որ այդ քահանաներից մէկը (որ նորօ բերս այստեղ մուրացկանութիւն էր անում) երևի իւր վիճակից շատ գոհ, ցանկանում է որ քանի իւր աչքը բաց է, իւր որդուն էլ քահանայ ձեռնադրել տայ։ Բայց 50 թուման պէտք էր. քահանան գիտէր այդ, սակայն գրպանը դատարկ էր. ինչ անէ, առանց երկար մտածելու իւրեանց դրացի պարսիկներից պարտ է վերցնում 500 դրան, ամսական իւրաքանչիւր թուումանին կէս դրան տոկոսով. փողը տանելով Նաջի եպիսկոպոսին, իւր տղան քահանայ է ձեռնադրել տալիս. վեց ամիսը մի անգամ տոկոսը քաշւում է մայր գումարի վրայ և ով հրաշք, երեք տարի անցնելուց յետոյ, աճելով դառնում է մի գումար, որ երբ քահանան լսում է մնում է շուարած. ինչ անէ։ Գնում է Ջուղայ, ներկայանում սինոդին։ Ս. հայրերը պատասխանում են. հէր օրհնած, ինչ ես շուարել, Աստուած բարաքեսթ տայ ժողովրդին, մի քսակ վեր առ գնա Թէհրան։ Եւ ահա այդ օրից յետոյ Թէհրանցիք ականատես եղան այն տարաբողութեան, որ կոչւում է մուրացկանութիւն։ Մուրացկանութիւնը՝ ըստ ինքեան հաճելի երևոյթ չէ, սակայն ողեխարշ տպաւորութիւն է թողնում, երբ անողը հոգևոր պաշտօնեայ է լինում։

Այստեղ, հիմա մենք Երշէն երեցից հարցնում ենք, ո՞վ է մեղաւորը. արդեօք. ո՞վ չէ իմանում, որ 40 տուն չքաւոր գիւղացու ուժից կատարելապէս վեր է 3 քահանայ պահպանելը և մի՞թէ ձեռնադրողը չը գիտէր, թէ այդ 50 թումանը ինչ միջոցով է ձեռք բերած եղելի քահանան։

Դեռ Պարզեանց սրբազանը, Ատրպատականի վիճակում, երբ մի որ և իցէ Մնացական ափու*), կամ բողոքական միսիոնարների խոհարար Հայրապետին քահանայ է ձեռնադրում, մի կերպով արդարանում է կրկնելով Երշէն երեցի խօսքերը, թէ Մուժամբարի (հայաբնակ մի գիւղ է Դավրէժի մօտ) 120 տուն հայը և Ալչամուլքի 70 տունը մնացել են առանց հոգևոր մխիթարութեան, նրանց ննջեցեալը՝ անթաղ, նորածինը՝ առանց մկրտութեան և այլն և այլն. իսկ Ամմադարադի համար, փառք երկնքին, այդպիսի մի պատճառանք բերել չէր կարելի։ Այդ տեղ արևի ճառագայթներից աւելի պարզ երևում է այն սոսկալի ախտը, որ դժբաղդաբար մեր հոգևորականաց շատերի գլուխ գործոցն է կազմում-նիւթապաշտութիւն, արծաթասիրութիւն իւրեանց զզուելի հետևանքներով։

Հիմա յարգելի հայրեր, դառնանք ձեզ, արդեօք այս երկար խօսակցութիւնից յետոյ, կարողացա՞ք մի գաղափար կազմել թէ ո՞վ է ճշմարիտ հաւատացեալը, ո՞վ է Հայաստանեայց եկեղեցու ճշմարիտ պաշտպանը, ո՞վ է ճշմարիտ Քրիստոնեան մենք, թէ դո՞ւք։ Պատասխանեցէք ձեր խղճին։

Վաղարշակ Բժշկեանց

ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհանրապէս ամեն ծեռնարկութիւն եւ կամ գործ դժուարութիւնների մի շարք է, որովհետեւ դրուած ենք այն աշխարհի մէջ ուր, երջանկութիւնը դժուարութեան պարիսպների ետեւ է պահուած. այնպէս որ մարդս, իւր կենաց սեմին ոտք կոխելուն պէս, իւր մանկութեան բուրաստանի, անմեղութեան նորաբողբոջ վարդերի նուրբ թերթիկների տակ ծածկուած դժուարութեան փշերից խոցուելով, սկսում է դառնագին լալ եւ բողոքել։

Աշխարհս ընդապէս, մեզ ծանօթ եւ անծանօթ, բարոյական եւ նիւթական բարութիւնների անհուն եւ անապառ մի գանձ է, որի ծալքերում ծածկուած են որիւր անգնահատելի եւ անհամար գանձեր ի վայելս մարդկութեան, որոնց չի կարողացել դեռ թափանցել մարդկային անզօր աչքն։ Այո մարդկային դիւրակեցութեան եւ երջանկութեան համար- աշխարհս իւր ծոցում պահած ու ծածկած է ամենայն տեսակ բարիք եւ վայելքներ, սակայն ինչու՞ ամեն մարդ չի կարողանում անխոտիք վայելել այդ Աստուածապարգեւ բարիքներն. ո՞ Աստուած, այն անտեսանելի եւ գերբնական երկնային Զօրութիւնն, ճանաչելով իւր ծեռագործ մարդկային սերնդի թուլութիւնն եւ հեշտասիրութիւնն, եւ այնպէս իւր անհուն իմաստութեամբն՝ փակեց այդ ամեն բարեաց եւ երջանկարաշխ գանձերի դռներն ու բանալին յանձնեց անաւորոյն դժուարութեան։ Ուստի ով չմաքառէ եւ չը յաղթէ այդ հսկային միանգամայն եւ ընդ միշտ զուրկ պիտի մնայ ընութեան բոլոր պարգևներէն, որ այս օր դրուած է դժուարութեան հսկողութեան ներքոյ։

Սքանչելապատիւ ընութիւնն, ոսկի եւ շատ թանկագին մետաղներ ու անգին զոհարներ պարգևեց մարդուս, սակայն աւա՜ղ, որ լեռների ապառաժեայ ծոցերում՝ ժայռակնիք պահուած եւ դժուարութեան հսկող ձեռաց տակ է դրուած, որին, մինչ չը յաղթենք եւ չենդրենք բարձրաբերձ լեռների սիրտը եւ չքամենք նորա ոսկեզնդուն երակներն, չպիտի կարողանանք վայելել ընութեան այդ պարգևները, եւ կմնանք միշտ նոյն անքանը, յաղթահարուած դժուարութիւնից։

Նախախնամութիւնն սահմանելով դժուարութիւններ համայն նիւթական եւ բարոյական տիեզերքում, ուզեց ստեղծել մարդկութեան մէջ ճիգ եւ ջանք, խանդ եւ եռանդ, աշխատասիրութիւն եւ յարատեւութիւն ամենայն նկատմամբ եւ ի լրումն այս ամենին պողովատեայ կամք եւ ոսկեփեսաւոր ձգտումն ի յաղթութիւն։ Դժուարութիւնն է որ մարդս աշխատութեան է մղում, ուր չկայ դժուարութիւն այնտեղ կայ անքանութիւն, ծուլութիւն, մեղկութիւն եւ վերջապէս մեռելութիւն....

Եա որ թոյլ է դիմագրաւելու դժուարութիւններին, չի ճանաչում իւր անձ եւ կենաց նպատակն, որի ընթացքի ամեն մի քայլափոխում՝ պատրաստ են դժուարութեանց խոչնդոտներ։

Եթէ ներկայ աշխարհն ունի իրեն բիւրաւոր անուանի գիտնականներ հռչակաւոր ճարտարապետներ, հրմուտ արհեստաւորներ եւայլն, չպիտի պարծենայ թէ ինքն է ծնել։ Այլ այսպիսիք՝ այն դասակարգին են վերաբերում՝ որ երկաթեայ կամքով եւ յարատեւ աշխատութեամբ կարողացան յաղթահարել դժուարութեան. նորա ժլատ ձեռքէն խլելով ոսկեղէն բանալին. եւ այնպէս բաց արին մարդկութեան առաջ, գիտութեան, արուեստից. ճարտարութեանց եւ այլ նիւթական եւ բարոյական՝ ծածկուած շատ սքանչելիքների եւ հրաշալեաց դուռն, որով, այսօր երջանկանում եւ հրճուում է առաջադիմասէր մարդկութիւն։

Եթէ իշխանութիւն անգամ ունենայի, մարդկութեան առջեւէն չպիտի բառնայի դժուարութիւններն, որովհետեւ այդ անելով, չէ թէ բարութիւն արած կը լինէի. այլ անէծք մարդկութեան, որով զայն անքան անասունների դասին իջեցրած եւ ստորնացրած կլինէի։

Դժուարութիւնների դէմ՝ չպիտի խոնարհի, չպիտի վհատի, չպիտի յուսահատի կամ ամօթահար մնայ մարդս, այլ իւր գիտութեամբ եւ հանճարով յարատեւ աշխատութեամբ եւ պողովատեայ անխորտակելի կամքով, պիտի դիմադրէ եւ յաղթէ՝ զայնս, յաղթելով իւր աշխատութեան շաւղում՝ յարուցուած բոլոր խոչնդոտներն.... եւ այնպէս յառաջ մինչ լիովին վայելէ իւր անդուլ, աշխատութեանց բաղցր պտուղը։

Նեցցն՝, կեցցն՝ այնպիսիք, որ կը ծեռնարկեն, կգործեն եւ կաշխատեն դիմագրաւելով բոլոր ուղղակի եւ անուղղակի, կողմեակի կամ ինքնաբերական դժուարութիւններին, բացելով ընդհանրութեան շատ եւ շատ ծածկուած գանձերի դռներն, այսպիսիք՝ մարդկութեան բարերարներն են եւ անմահանալու արժանի։

Սոկրատ Մ. Դեղոֆեանց

ԱՌ ԱՍՏՂՆ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

Ծերուկ հասակով, սակայն թարմ հայեացքներով և վառ զգացումներով արժանացայ վերջապէս սիրելի Աստղիկ, Պարսկահայի խաւար մտաւոր հորիզոնի վրայ փողփողիլդ տեսնել։

Աստղիկ, քո ծագելուն սպասելով, հանգուցեալ ընկերոջս հետ, անքուն, շատ գիշերներ լուսացրինք, որքան փարեցանք քո ուրուականիդ հետ, սակայն երկինք կարծես անարժան էր համարած մեզ մեր յուսոյ պսակին արժանացնելու։

Բայց չէ, Աստղիկ, երկինք թէև հաշտ չէր մեզ հետ, սակայն բարեկամ էր քեզ. նա, չէր կամենում քո բաղդը լանձնել մեզ պէս հին, փտած ուղեղների, այլ սպասում էր ժամանակի երկունքին, որ ծնէ թարմ ոյժեր, վառվռուն գործիչներ, որոնք զինուած ժամանակի նոր զէնքերով՝ կարողանային դէմ դնել խաւարի գորութեան, յաջողէին հալածել քո հորիզոնից թանձր մեգերը և Պարսկահայի մտաւոր զարգացման համար բաց անել մի նոր տարեգլուխ։

Ո՞րքան երջանիկ եմ համարում ինձ այսօր, որ բաղդ եմ ունենում ցնծութեամբ ողջունելու այդ նշանաւոր տարեգլուխը։

Բայց Աստղիկ, նայէ, եթէ դու մի որ շեղուիս այն հարթուած ուղիից, որ զբծել է քեզ հաճար Պարսկահայի պահանջը, եթէ դու դաւաճանես քո բարձր կոչումին, այն ժամանակ մնաք բարև, ակի երազներ և ցնորքներ. այնժամանակ, քո յատակագիծը պատրաստող Մարգարեանը դերեզմանից անիծելով պիտի անիծէ քո գոյութիւնը։

Մի քանի խօսք էլ քո յարգելի խմբագրական ժողովին։ Սիրելի բարեկամներ, Դուք ընտրած էք մի խիստ լայն ասպարէզ, այո՛, բաւ պիտի ըմբռնէք այդ ասպարէզի վեհութիւնը և աչքի առաջ ունենաք այն բոլոր արկածները, որով պատած է նա, այդտեղ փռուած չը կան վարդի թերթեր, այդ տեղ ինն միայն փուշ ու դաղասկ, որոց վրայ պիտի դրոշմէք ձեր գարշապարը. մի քիչ վհատութիւն, խաւարած պէտք է համարեր և ձեր սիրելի Աստղը. ուրեմն ջանք և յարատեւութիւն պէտք է ձեզ, շարունակ արծարծած պահելու նորա լոյսը։

Մեզանում սովորութիւն կայ. երբ մի զաւակ առաջին անգամ արդանդ է բաց անում՝ նորա բարեկամները ընծաներով են շնորհաւորում նորա լոյս աշխարհ գալը. ես, թէև չունիմ ոսկի, չունիմ արծաթ, սակայն չեմ զլանում իմ ազգատիպ լումանն ձգելու քո հարուստ գանձանակը։ Նոմատիկս հետ միասին ղրկեցի քեզ իմ աշխատասիրած «Նժարներ» վէպիկը, որ առնուած է Պարսկահայ կեանքից. եթէ քո պատկառելի խմբագրական ժողովը յարմար դատէ իւր ծրագրին, թող տպագրէ նրան քո՞ թերթերիդ բառասիրականի բաժնում։

Իսկ ինձ, այսուհետև մնում է աղօթել միայն քեզ համար տնամպ օրեր, որ չազատանայ քո լոյսը և լինիս այն՝ ինչ որ ակնկալում են քո բարեկամ-

---

*) Ես, 12 տարի առաջ, Դավրիժու Աբամեան դպրոցում՝ ուսանող էի, Մնացական ափին մեր վարժարանում՝ ծառայ էր, շատ յաւ եմ յիշում դա՝ ցաղդի հարուածներից զզզուած մի ծերունի էր, բայց այս ամառ կրկին Դավրէժ պատահելով՝ Ալչամուլք գիւղում՝ պատիւ ունեցայ ներկայանալու մեր Մնացական ափուն իրը տէր Նղիշէի. խե՜ղճ Նղիշէ։

ները և աբմբաղչ Պարսկահայ ժողովուրդը երկաթ տաքիներից ի վեր։

Քո բարեկամ

Մկրտիչ Բժշկեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

25 Դեկ. 1895

Մի ժամանակ, այն, սոսկալի էր այդ ժամանակը, երբ հայ ժողովուրդը, դեռ չէր տօնած իւր մտաւոր զարգացման ծնունդը, երբ, լրագրական խօսքը՝ դեռ չէր ցնցած նորա ընտրմացած հոգին, երբ կղերական դասը իւր մտքի մշակութեամբ անհամեմատ աւելի բարձր դիրքի վրայ էր կանգնած՝ այդ ամբոխը, այդ հասարակ ժողովուրդը, մի տեսակ հոգեկան մխիթարութիւն և սփոփանք էր գտնում հոգևոր քարոզների մէջ։ Նա, ամենայն ջերմեռանդութեամբ վազում էր լսելու և հրճուելու յաւիտենական կեանքի գեղածիծաղ նկարագրութիւններով և սոսկալ զարհուրել դժոխքի տանջանքների արհաւիրքով։

Ուրախութեամբ կրկնում ենք. անցան այդ սև օրերը։ գիտութիւնը դարձաւ հասարակաց սեփականութիւն և բեմերի վրայից արտասանուած միակողմանի ճարտասանութեանց փոխարէնցի՝ լրագրական լրջորէս ուսումնասիրուած բազմակողմանի ճշգրիտ հարցեր և կեանքի թոթոուն խնդիրներ։ Քարոզիչը մնաց բեմի վրայ միայնակ, նրան այլևս լսող չկայ։

Իսկապէս սրբին աւելի հաճելի է լսել. մէկը խօսում է կեանքի վրայ, ծիծաղում հրճուում նորա փայլուն պատկերի առաջ, սթափեցնող, կսկծալի ճիչերը արձակում մալորուածի դէմ. իսկ միւսը՝ միանուագ թառաչները արձակում մահուան. անդարձ մահուան վրայ միայն, մէկը խօսում է կեանքից, միւսը մահից։

Ուրախալի է, երբ վերջիններիս մէջ ևս երևում են զօրաւոր ոյժեր, որ ցանկանում են հարուածել կործանել հին ձևը և նրա փլատակների վրայ կառուցանել «նոր շէնքը,» իրեն պատուանդան ունենալով ներկայ պահանջների համաձայն գործեակցութիւնը։ Այս շիջալին պատկանում է և մեր քարոզիչ վարդապետ Եվդոտեանը։

Հայտնի կիրակի, բաղդ ունեցանք լսելու նորա քարոզը, Հայր Եվդոտեան թէև չունի հանգուցեալ Նարբէյի գիտութիւնը և ոչ նորա տաղանդը, թէև զուրկ է Սրուանձտեանի ոգուց, թէև ծանօթ չէ Օրմանեանի հմտութեանց, սակայն նա խօսում է այնքան պարզ որ յաջողում է իւր նպատակը մուտ գցնել ժողովրդի սրտին, այն միակ հայ հոգևորականի նման, որ այս օր ուրբ Լուսաւորչի յաջորդն է։ Նորա քարոզների մէջ չենք հանդիպում ոչ դժոխքի և ոչ սատանաների այլ՝ կեանքի և միայն կեանքի։

Այս կիրակի էլ Դեր. Հայրը հաւատարիմ մնաց իւր սկզբունքին, նա խօսեց մի քանի հասարակային խնդիրների, աւելի լաւ է ասել սխտերի վրայ, սակայն ցաւալի է ասել, որ նա իւր հիանալի քարոզը կնքեց արտակարգ մի խնդրով այդ տեղ բաց արաւ մի տան խնդիր և շեշտեց որ անպատճառ եկեղեցին պարտաւոր է գնել այդ տունը, որովհետև իրեն հալ կուգար է։ Ինչպէս քարոզիչ Հայրը իւր քարոզի մէջ յիշեց և խոստովանեց, որ ներկայ մեր ունեցած սուրբ Գէորգ եկեղեցին, մի քանի տարի միայն կարող է մեզ ծառայել, այնուհետև Հայերը պարտաւոր են նրան մնաք բարև տալով հեռանալ և մի նորը կառուցանել. այսպիսի պարագայում, ասացէք խնդրեմ, խոհեմութիւն է կօպէկներով հաւաքուած ահագին մի գումար վատնել մի տուն առնել և տնօգուտ մի կողմ ձգուած թողնել։ Իսկ եթէ նա մտածում է, թէ այդ տունը մի օր կէ՛ծախուի, մի պարոկ կառնէ և մեր բաղնիք գնացող տիկինները կարող են անախորժութեանց ենթարկուել. մենք կասենք, որ այն ժամանակ կարելի է խնդրել մեր պատուասէր տիկիններից, որ փոխանակ անպատճառ այդ բաղնիքը յաճախելու, բարեհաճին դրսի թաղկ աւելի մօտ բաղնիքը գնալ

Մենք կը ցանկայինք, որ եկեղեցու բեմի վրայ, ասուպի պէս երևացած այդ սքանչելի քարոզները ստէպ կրկնուէին, միայն երանի թէ նրանց հիանալի ամբողջութիւնը չ՝այլանդակուէր այդպիսի արտակարգ խնդիրներով, այն ժամանակ կարծում եմ որ հայ մարդը կը մեկնէր եկեղեցուց կատարեալ բաւականութիւն ստացած հոգով և հաճելի տպաւորութեան տակ։

Վ. Բ.

ՆԱՄԱԿ ՋՈՒՂԱՅԻՑ

17\28 Դեկ. 1895

Արգոյ խմբագրութիւն Ասող-Արևելեան Շաբաթաթերթի

Ձեր նորահատատ թերթի յայտարարութիւնը իմ ձեռքս անցնելով կփութամ մի քանի խօսքերով քաջալերել այդ գովելի ձեռնարկը։

Նոր տարին մի բարի ձեռնարկութեամբ էք սկսում մեր սիրելի Հայազգի եղբայրակիցների մէջ, լոյս ընծայելով Ասող-Արևելեան նոր շաբաթաթերթը Հայ մտաւոր հորիզոնի վրայ։ Պարսկաստանի Հայ ժողովուրդը հատկանում է անշուշտ Ձեր գործի ծանրութիւնը որը Ձեր ուսերի վրայ կրելով զգումենք թէ պիտի ըաղեէք բարոյական եւ նիւթական մեծամեծ դժուարութեանց, որոց յաղթելու համար ունենալու էք բաւական մեծ կորով։

Մեծայոյս ենք, որ ձեր շաբաթաթերթը շպիտի զլանայ անգնահատելի օգուտներ հասցնել իւր գրական. գիտական. ազգային եւայլն եւայլն յօդուածներ.ով որոնք կարող պիտի լինին Պարսկահայ զանազան խաւերի մէջ լուսաւոր զարգացումները եւ բարոյացուցիչ սկզբունքները յառաջ ներկայ։ 1896 թուականի ծագմանը հետ ողջունումենք նա եւ Ասող-Արևելեանի ծագումը, մաղթելով նոյն ժամանակ ըստ ամենայնի ընթերցողներին

Շնորհաւոր Նոր-Տարի

Փիլ.Արմէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ասող-Արևելեանի հրատարակման յայտարարութիւնը դուրս գալուց յետոյ՝ ամեն տեղից մեզ շնորհաւորութեան և ցնծութեան նամակներ են գալիս. դա ինքնին արդէն ապացուցանում է թէ Պարսկահայն երկար ժամանակից ի վեր արդէն սպասում էր այս թերթին և զգում էր նրա անհրաժեշտ պէտքն։

Այդ քաջալերական նամակներից մի երկուքը դրել ենք ներկայ համարի մէջ և մեզ ուրախակցող ամեն բարեկամներին յայտնում ենք մեր սրտագին շնորհակալութիւնը և խոստանում ենք օգտուիլ իւրեանց փորձառական խրատներից։

Նոր Ջուղայից մեզ գրում են, թէ այնտեղի Բաֆֆի ընկերութիւնը նորերումս մի թատերասիրաց ընկերութիւն էլ է կազմել և թէ պատրաստում են նոր տարուայ գիշերը մի ներկայացում տալու։ Ուրախալի է տեսնել մեր ջուղայեցի եղբարց գործելու այս նոր եռանդը և ի սրտէ քաջալերում ենք նրանց հաստատ կամքով գործելու, և շարունակ. զի հաստատ կամքի առաջ ամեն դժուարութիւններ կը յաղթուին։ Մինչդեռ Նոր Ջուղայեցի երիտասարդութիւնը իւր չ՝ունեցածը ձեռք բերելու է աշխատում, ինչով է զբաղւում Թէհրանի երիտասարդութիւնը..... իւր ունեցածը ձեռքից տալով։

Հնդկաստանից մեզ հասած մի նամակի համեմատ Ն. Ս. Եսայի եպիսկոպոսը այժմ պիտի մեկնած լինի դէպ յ՝Էջմիածին։ Նրա մասին արդէն քանի տարիներից ի վեր Ն. Ջուղայեցիք և Թէհրանցիք բողոքում էին Վեհափառ Կաթուղիկոսին և այժմ ինչպէս լսում ենք Հնդկաստանցիք էլ են հեռագրով բողոք բարձել, որով Եսայի եպիսկոպոսը իւր հրաժարականը տալով Ն. Վեհափառութեան հրամանաւ Էջմիածին է գնում։ Ցանկանում ենք իրան աւելի զգաստութիւն և աւելի հեզահամբոյր մի բնաւորութիւն իւր ապագայ թեմի հանգստութեան համար։

Հաստատ աղբիւրներից իմացանք, ազգային Հայկազեան վարժարանի նախկին«ազատամիտ» հոգաբարձուներից մինը, իւր որդին այդ դպրոցից հանելով, տարել յանձնել է քաթոլիկ տէրտէրներին։ Զարմանալի չէ, որ թէև պարոնը՝ մեզ հետ միասին լաւ համոզուած է, որ այդ ջրհեղեղեան ուսուցիչների մտաւոր զարգացումը մեր շինական քահանաներից աւելի բարձր չէ և նորէն մի այդպիսի քայլ է անում։ Մենք (այս անգամ չենք յայտնում անունը) միայն քաղաքավար կերպով խնդրում ենք, որ անձնական կրքերին չը զոհէ իւր անմեղ որդու ապագան. եթէ մեր Հայկազեան դպրոցի ծրագիրը և նրա գործադրութիւնը իրեն դուր չէ գալիս, թող իր որդին յանձնէ դէթ մի կոշկակարի, աւելի լաւ է, որ ապագայում Հայ ազգը ունենայ մի ազնիւ արհեստաւոր անդամ, քան թէ բարոյապէս փչացած մի հրէշ։

Ուրախութեամբ լսում ենք, որ քաղաքիս՝ մեր բողոքական եղբայրները, մասնաւոր մի գանձանակ են որոշած, ուր պիտի հաւաքուին այն գումարները, որ այս տարուայ ծննդեան տօնի առթիւ պատրաստուելիք ճոխ սեղանների վրայ պիտի շռայլուին և ապա այդ գումարը պատշաճ միջոցներով պիտի հասցնեն մեր կարօտեալ և սովատանջ եղբայրներին։ Հիանալի է հիանալի։ Ի՞նչ կը լինէր, որ այդ նախանձելի ձեռնարկին հետևէին և մեր Լուսաւորչադաւան հայերն։ Սիրելի ազգակիցք, արդեօք, կարողանում էք ըմբռնել, որ ձեր ամեն մէկի պատրաստած սեղանի քաղցրաւենին կարող է մահուան ճիրաններից կորզել ձեզպէս մի անհատի կեանքը, որի սիրտն ևս ընդունակ է հրճուելու կեանքի գեղածիծաղ պատկերով, սակայն, այսօր նա ստիպուած՝ պատրաստուում է յաւիտեան փակել իւր աչերը։ Չէ, սիրելիք, չէ, այստարի, հայի համար չը կայ ծնունդ և ոչ զատիկ, քանի որ զարհուրելի սովը մարդասիրի սեղանն է բաց արել։ Թոչինք, թոչինք դէպի այդ սոսկալի սեղանը և նրա շուրջը բոլորած կատարենք մեր ծննդեան և զատկական տօները։

Էնզելիից պ, Ուադ Մելիք Ալլահվերտեանն մի օրինակ Ասող-Արևելեան նուիրեց նոյն քաղաքի հայոց վարժարանին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Արձագանքից» տեղեկանում ենք թէ հանգուցեալ կոմսուհի Ա. Դելեանեանը (ծնեալ Լազարեան) կտակել է 48,000 ռուբլի Լազարեան ճեմարանում գիշերօթիկ աշակերտնե պահելու նպատակով, 10,000 Պետերբուրգի հայոց եկեղեցիներին և 40,000 ռուբլի՝ որով պիտի ապաստանարան շինուի հայոց եկեղեցու բագում 6 աղքատ և ծերացած կանանց համար։ Ցոյս ունենք, որ այս բարեսիրական քայլը օրինակ պիտի դառնայ մեր Պարսկահայ կանանց։

—«Մշակի» մէջ կարդում ենք թէ Ղուշու թեմի կառավարիչ Սաթունեան վարդապետը ժողովի է հրաւիրել 50 հոգու չափ հայ վաճառականների և առաջարկել, որ բացի կիրակի օրերից եկեղեցական աօն օրերն էլ խանութները մինչև երեկոյ փակ են։ Աչքը լոյս ծոյլերի.....

—Դեկ. 9-ին Թիֆլիսում տեղի է ունեցել հայոց հրատարակչական ընկերութեան նուագահանդէսը որից զուտ արդիւնք է մնացել մօտ 700 ռուբլի (385 թուման)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Հռոմ 9. Դեկտ. Ապիսինեայից լուր է հասել թէ Զուանները Մաքալէում յարձակուեցին իտալացիների վրայ, բայց ծանր կորուստ տալով յետ մղուեցին։

Բոնդոն 10. Պարսկաստանի Ատրպատական նահանգում աղէտալի մի երկրաշարժ եղաւ, ուր 1,100 մարդի կորուստ եղաւ և 1.000 տուն կործանուեցաւ։

ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ

Թէհրան, Մկրտիչ Բժշկեանցին. Ուրախութեամբ ենք ընդունում մեր լուսաւորութեան նահապետներից մէկից գեղեցիկ ընծան և խրախոյսը, յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը, խոստանում ենք նաև ձեզ յարգելի Բժշկեանց, որ մենք չենք խնայել մեր բոլոր ոյժը Ասողը դարձնելու այն, ինչ որ ձեզպէս բարեկամների և ընդհանուր պարսկահայի ցանկութիւնն է եթէ ոչ այսօր, գէթ վաղը միւս օր.

Ն. Ջուղա. Փիլ Արմէն. Շնորհակալ ենք, շարունակեցէք։

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ

Ասող-Արևելեան Ընկերութիւն

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Մակար Կ, Մակարեանց

Ջաւա-Հայ Տպարան